

ԱՐՑՈՒՆՔԻ ՇԻԹԵՐ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Ընթրիքէն վերջ, մինչ Առաքեալք Մարմնոյ ե՛ւ Արեան
Նոր խորհուրդին կը փորձէին բանալ մատեան,
Յիսուս ըզգաց խորն իր հոգւոյն պէկածուող
Մեծ Գիշերաւան անդռնամէին սարսուռն ու դող,
Եւ դուրս ելաւ, պատշգամբ վերնատան հին,
Ցրելու խամար ամպրոպներն իր սեւ երազին:
Կեցաւ հոն գուսպ. տրտմաբախիծ այլ կորովի
Նետեց ակնարկ մ'աստուածային սուրբ գորովի,
Քաղաքին վրայ ապաշընորհ, որ դաւանան
Մութ գիշերուան նոր կը հագնէր իր պատմութեան:
Ցիշե՛ց Մսուրն Բեթղեհէմի, որ, բիշ հեռուն,
Կը քաֆէր գիրկն Յուդայի լեռն սարակներուն,
Եւ Գալիլիան՝ ծովափնագե՛ղ հայրենի հող,
Որ գգուած էր մանկութիւնն իր աստուածաշող:
Զոյգ կատարներ ամպածըբար՝ Թափոր, Հերմոն,
Կը վառէին յիշատակացն իր հորիզոն,
Մին՝ իր լուսեղ գագաթներով պերն, արեգջեր,
Ուր հայրենի հազար օր մը փառք ու շողեր,
Միւսն՝ Փորձութեան չար խորհուրդէն ամօքահար՝
Ըստրջանքի լալօններով կը հեկեկար:

Այսպէս, երկա՛ր, երկա՛ր պահ մը յիշատակաց
Աշխարհին մէջ թեւածելէ ա՛լ պարտասած,
Դարձաւ նորէն աշակերտացն իր մեռտաւան,
Որ հաւատքի, յոյսի շողով մը անսասան
Կը սպասէին Վարդապետին, որ վերըստին
Բանար իրենց քաֆուն խորհուրդն այն Սեղանին,
Որուն վըրայ դեռ պահ մ'առաջ հաց ու գինւոյ նոր
Մատուցմամբը Բաշխեց Մարմինն իր երկնաւոր:

Բաժանումիս պահն է՝ վերջինն: Ո՛չ մէկ շըշուկ:
 Պէ՛տք է իջնել, Կեդրոնի Ձորն այն չաբաշուք,
 Ուր մատնութեան դաժանանող նենգ համբոյրին
 Վըրաբօրը հասած է իր հուսկ վախճանին:

Հըրածեշտի հոգեխռով այդ վեհ պահուն,
 Տեսաւ Տէրը խոր տրտմութիւնն իրեններուն,
 Եւ մեկուսի, վիշտին մէջը վիմատարած՝
 Սրբեց վերջին կաթիլներն իր սուրբ արտասուաց:

ՀՄԱՅՆԱԿԻ ԳՐԱՆԵԱՆ

Պէյրուք

